ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ՆԻՍՏԻ

Ք. Չարենցավան «16» հունիս 2023թ. **ժ. 14:05-16:15**

2023 թվականի հունիսի 16-ին տեղի ունեցավ «Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական հարցերի» մշտական հանձնաժողովի նիստը: Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

1)Գևորգ Գևորգյանը (հանձնաժողովի նախագահ) «Միասնական դաշինք»
2)Լիլիթ Հարոյանը (հանձնաժողովի քարտուղար) «ՔՊ» խմբակցություն
3)Նորայր Առաքելյանը՝ «Միասնական համայնք» դաշինք
4)Սարգիս Վարդանյանը՝«Միասնական համայնք» դաշինք
5) Նունե Թադևոսյանը «ՔՊ» խմբակցություն
Ներկա էին նաև՝
6)Գայանե Գրիգորյանը՝ համայնքի ղեկավարի տեղակալ
7)Արմինե Զաքարյանը «Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և սոցիալական աջակցության» բաժնի պետ
8)Սևակ Վարդանյանը՝ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ
9)Անահիտ Խեչոյանը՝ «Ապրելու երկիր» խմբակցության ղեկավար
10) Վարդան Մակինյանը՝«Միասնական համայնք» դաշինք
11)Սերգեյ Հովհաննիսյանը՝ Չարենցավանի համայնքապետարանի Ներքին Աուդիտի պետ
12)Հերմինե Մկրտումյանը՝ Չարենցավանի համայնքապետարանի Ներքին Աուդիտի գլխավոր մասնագետ-աուդիտոր
13)Գոհար Մանասյանը՝ Չարենցավանի քաղաքային գրադարանի տնօրեն
14)Մերի Սահրադյանը՝ Չարենցավանի Գառզուի անվան արվեստի դպրոցի տնօրեն
15)Գայանե Աֆյանը՝ Ֆինանսատնտեսական և գնումների բաժնի պետ
Նիստից բացակայում էին «Միասնական համայնք» դաշինքի ավագանու անդամ՝ Մելիք Գասպարյանը և Աննա Բալյանը «ՔՊ» խմբակցություն:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

«ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՔԱՂԱՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ», «ԳԱՌԶՈՒԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՐՑԵՐԸ»

Ներկաները լսեցին.

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Գևորգյանը ներկայացրեց օրակարգային հարցերը և խնդրեց Չարենցավանի համայնքապետարանի Ներքին Աուդիտի բաժնի պետ՝ Սերգեյ Հովհաննիսյանին ներկայացնել վերը նշյալ 2 համայնքապատկան ՀՈԱԿ-ներում իրականացրած աուդիտի արդյունքները և աուդիտորական եզրակացությունը: Սերգեյ Հովհաննիսյանը սկզբում խոսեց քաղաքային գրադրանում իրականացված աշխատանքներից, նշեց, որ գրադարանը ունի 43 500 գիրք և տարվա կտրվածքով ստանում են ևս 200 գիրք: Նշեց, որ քաղաքային գրադրանի հաստիքացուցակը ունի 19 հաստիք և բոլորի աշխատակիցների հետ տնօրենի ներկայությամբ զրուցել են: Սերգեյ Հովհաննիսյանը նշեց, որ աշխատանքի հստակ բաժանում կատարվ:ած չէ և մարդիկ կան, որ ամեն գործ կատարում են:

Անահիտ Խեչոյանը հետաքրքրվեց.

-Այդ դեպքում ի՞նչպես է կատարվում աշխատանքի բաժանումը ըստ հաստիքների, չէ որ գոյություն ունեն աշխատանքային պայմանագրեր:

Տնօրեն՝ Գոհար Մանասյանը պատասխանեց, որ գրադարանի հաստիքների տարբերակում կատարելը առաջարկել է մարզպետարանը՝ իրավական վերահսկողություն իրականացնելիս:

Լիլիթ Հարոյանը հարցրեց՝

-Ըստ Ձեզ ո՞ր հաստիքներն են ավել;

Սերգեյ Հովհաննիսյանը պատասխանեց, որ ըստ աուդիտի տվյալների կարելի է կրճատել 2 գրադարանավարիներից մեկի, երկու կազմարարներից մեկի, 2 կազմակերպիչներից մեկի հաստիքները:

Անահիտ Խեչոյանը հարցրեց թե ի՞նչպես է հաստիքի արդյունավետությունը գնահատվել:

Սերգեյ Հովհաննիսյանը պատասխանեց, որ հաստիքի արդյունավետությունը գնահատել հնարավոր չէ, քանի որ աշխատողները ներքին փաստաթուղթ չեն լրացնում:

Տնօրեն Մանասյանը հակադարձեց, ասելով որ գրադարանը ունի տարեկան աշխատանքային պլան և այդ փաստաթղթում նշվում է, թե աշխատակիցներից հատկապես ովքեր են ներգրավված աշխատանքներում:
Սարգիս վարդանյանը տնօրենից հետաքրքրվեց, թե 8 գրադարանավարի գործառույթները որոնք են, իսկ Գևորգ Գևորգյանը առաջարկեց քննարկել բոլոր հաստիքները:
Ս. Հովհաննիսյանը նշեց, որ իրենց աուդիտորական աշխատանքի ընթացում 8 գրադարանավարների հետ էլ զրուցել են, նրանք բոլորն էլ գրեթե նույն գործն են իրականացնում:
Սարգիս Վարդանյանը առաջարկեց վերանայել աշխատավարձերը, իսկ Լիլիթ Հարոյանը առաջարկեց հաստիքացուցակների վերանայման դեպքում բարելավել գրադարանի վիճակը:
Սևակ Վարդանայնը ասաց, որ գրադարանի վիճակի բարելավման հարցը դա համայնքապետարանի գործառույթ է և համայնքապետարանը դա կանի:
Սուրեն Մուրադյանը հարցրեց Անահիտ Խեչոյանի կարծիքը որպես գրադարանի նախկին տնօրեն:
Անահիտ Խեչոյանը պատասխանեց, որ ինքը անձամբ դեմ է հաստիքներ կրճատելուն, բայց կողմ է հաստիքացուցակի կառուցվածքային փոփոխություններին, կադրային փոփոխություններին, որը էլ ավելի արդյունավետ կդարձնի գրադարանի աշխատանքները:
Գևորգ Գևորգյանը առաջարկեց քվեարկել հաստիքների կրճատման վերաբերյալ համայնքի ավագանուն նախագիծ ներկայացնելու հարցը:

Ներկաները քվեարկեցին՝

ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
3	0	2

Ներկաների քննարկեցին նաև.
«Չարենցավանի Գառզուի անվան արվեստի դպրոցի հաստիքացուցակի մասին:
Սերգեյ Հովհաննիսյանը մինչ հաստիքներին անդրադառնալը ներկայացրեց, որ 43 հաստիք կա բայց 45 անձ է աշխատում: Առաջանում է հակասություն:
Մերի Սահրադյանը պատասխանեց, որ նոր մասնագիտությունների համար առաջարկել է մասնագետ ընդունել, ովքեր կվարձատրվեն այլ ուսուցիչների չլրացված ժամերի հաշվին:
Սերգեյ Հովհաննիսյանը ասաց, որ դասատուների մասով աուդիտարական աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ չունեին բավարար ռեսուրս և ժամանակ և ներկա պահին եզրակացություն կարող են տալ ադմինիստրատիվ կազմի վերաբերյալ աուդիտի եզրակացություն:
Սերգեյ Հովհաննիսյանը ասաց, որ այս պահին գյուղերում կան արվեստի գծով խմբավարներ և առաջարկվում է խմբավարի հաստիքը փոփել և վերանվանել

դասատու: Առաջարկեց նաև «Չարենցի անվան թանգարանի» 2 հաստիքները հանել արվեստի դպրոցի հաստիքացուցակից և տեղափոխել գրադարանի հաստիքացուցակի վրա: Մյուս առաջարկը վերաբերում էր դաշնամուր լարողի աշխատանքին: Ըստ պայմանագրի նա պետք է աշխատի 9^{00}-18^{00}ն: Առաջարկվեց կնքել պայմանագիր և վճարել աշխատավարձի կեսը, միևնույն ժամանակ 2-րդ աշխատանք առաջարկելով էլի կեսը վճարելով:
Առաջարկվեց դռնապահի էլեկտրիկի և պարետի աշխատանքը միավորել մեկ հաստիքի տակ:
Ներկաները ասացին, որ տարածքը մեծ է և այդ հաստիքների միավորումը ճիշտ չէ:
Լիլիթ Հարոյանը հետաքրքրվեց, թե ի՞նչու են խմբավարները գրանցված արվեստի դպրոցի վրա:
Սուրեն Մուրադյանը բացատրեց, որ 2 խմբավարի համար նոր ՀՈԱԿ ստեղծելը անմիտ կլիներ:
Վարդան Մակինյանը կրկնեց նախորդ նիստի ժամանակ հնչեցված իր հարցադրումը.
-Արդյո՞ք արվեստի դպրոցը ունի որևէ հաստիքի անհրաժեշտություն, և եթե այ՛ո նախորդ նիստից մինչ այս պահը ի՞նչ քայլեր են ձեռնարկվել այդ ուղղությամբ:
Տնօրենը պատասխանեց, որ բուժքույր ընդունելու կարիք կա և մինչ այժմ քայլեր չեն ձեռնարկվել:
Խոսվեց լաբարանտի աշխատանքի մասին, ով զբաղվում է քանդակների խնամքով: Հարցադրում եղավ այն մասին, որ եթե աշխատանքը ըստ էության չի կատարվում անհրաժեշտ է այդ հաստիքը պահել:
Արմինե Զաքարյանը ասաց, որ անհրաժեշտ է, բայց առաջարկեց կրճատել, թողնել կես դրույք:
Տնօրեն Մերի Սահրադյանը նշեց, որ գեղարվեստի բաժնի համար տարածքի խնդիր է առկա և գոնե 2 սենյակ է անհրաժեշտ, բնականոն գործունեություն ապահովելու համար:
Գևորգ Գևորգյանը առաջարկեց քվեարկության դնել հաստիքների կրճատման վերաբերյալ համայնքի ավագանուն նախագիծ ներկայացնելու հարցը:

ԿՈՂՄ՝	ԴԵՄ՝	ՁԵՌՆՊԱՀ՝
4	0	1

Օրակարգային 2-րդ հարցը ներկայացրեց Գ. Աֆյանը ասելով որ բազմաթիվ դիմումներ են ստացել սոցիալական-հատոկ արտոնությունների հատվածից օգտվելու համար և առաջարկեց ըստ առաջնահերթության որոշել ում տրամադրել:
Ներկաները քննարկեցին և համաձայնություն տվեցին առաջարկին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԳևՈՐԳՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Լ. ՀԱՐՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Չարենցավան «16» հունիսի 2023թ.

Հիմք ընդունելով Չարենցավանի համայնքապետարանի Ներքին Աուդիտի զեկույցը «Չարենցավանի քաղաքային գրադարան» և «Գառզուի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ների առկա հաստիքային միավորների անհրաժեշտության և համապատասխան աշխատանքային գործառույթների իրականացման վերլուծության վերաբերյալ՝ որոշում է ներկայացնել նախագիծ՝ փվյալ ՀՈԱԿ-ների հաստիքացուցակների և դրույքաչափերի վերանայման վերաբերյալ:

Օրակարգային երկրորդ հարցի՝ «Սոցիալական հատուկ արտոնություններ» հատվածից օգտվելու համար սահմանվեց հերթականություն:

1)Գևորգ Գևորգյան՝ հանձնաժողովի նախագահ

2)Լիլիթ Հարոյան՝ հանձնաժողովի քարտուղար

3)Նորայր Առաքելյան՝ հանձնաժողովի անդամ

4)Սարգիս Վարդանյան՝ հանձնաժողովի անդամ

5)Նունե Թադևոսյան՝ հանձնաժողովի անդամ